

րենայ ինքիբնն յարմարցնել . բայց կրընայ պարզ գլխարկը գնել յարդարուն միաք ունեցող մը , ու վրայի զարդերը ինքիբնն վայելուչ յարմարցնել :

Շապիկը կրնայ ըլլալ բամբակէ կամ քթանէ : Բամբակէ շապիկը աւելի տաք կը պահէ և քրտինքը աղէկ կը ծծէ և մէկէն չպաղիր . բայց շուտ կը մաշի : Քթանէ շապիկը թէպէտ երկար կը դիմանայ՝ բայց չտաքցընէր , և քրտնելէն ետև մէկէն կը պաղի քրտինքը դադրելուն պէս :

Բրդէ շապիկի գործածութիւնը իր անպատշաճութեանը հետ ունի իր օգտութիւններն ալ : Անպատշաճութիւնն է՝ որ զմարմինը միշտ քիչ մը խոնաւ կը պահէ , որով մտրթը թոյլ կ'ըլլայ : Բայց օգուտներն ալ շատ են . օդոյ յանկարծակն փոփոխուելուն վնասներէն կը պահէ , մարմնոյ արտաշնչութիւնը դիւրաւ կը ծծէ , և քրտնելէն ետև պաղելէն կը պահէ : Օգտակար է կրծոց հիւանդութեանց ենթակայ եղողներուն . տաքէն պաղ , պաղէն տաք յաճախ անցնելու ստիպուած վիճակի մէջ եղող անձանց . յաճախ հարբուխ եղողներուն , հազ ունեցող ծերերուն , և այն տղոց որ դիւրաւ հարբուխ կ'ըլլան , և տկար կազմուած ունեցող կանանց : Ֆլանելներուն շատը բամբակով խառնած են . պարզ բրդէ ֆլանել քիչ կը զանուի . բամբակ խառնած ըլլալը ճանշնալու համար մէկհատիկ հնարքն է 12 աստիճան փոթասի ջրոյ մէջ դնել կտոր մը՝ ու ջուրը ետ հանել , թէ որ մէջը բամբակ խառնած չէ՝ քիչ ատենի մէջ կը լուծուի ու օճառի ջրոյ պէս խիւս մը կը դառնայ . բայց թէ որ բամբակով խառնած է բոլորովին չլուծուիր , այլ կէս քայքայած լաթի պէս կը մնայ : Ֆլանելը ձևելէն առաջ պէտք է թրջել տաքցուցած օճառի ջրոյ մէջ . թէ որ այս ըզգուշութիւնը չընես . առջի լուալուն կը քաշուի ու կը պղտիկնայ լաթը : Ֆլանելը հասարակ լաթի պէս պէտք չէ լուալ , այլ կամ ալիւրով և կամ գետնախրնձորով : Ալիւրով լուալու կերպն այս է . երկու դրգալ ալիւր խառնէ մէկ ոխա

թեթև օճառի ջրոյ մէջ՝ ու եռացու ջուրը միշտ խառնելով՝ որ ալիւրը տակը չնստի , կամ գունդ չկապէ . և առ զանգուածին կէսը եփ ելած ատեն լեցու ֆլանելին վրայ . և երբ ձեռք դիմանալու չափ կը պաղի , աղէկ մը տրորէ ֆլանելը լաթ լուալու պէս , ու ետքը պաղ ջրէ անցու : Անկից ետև նորէն մնացած զանգուածին մէջ խոթէ ֆլանելը ու նորէն աղէկ մը արորէ , ու նորէն լուա պաղ ջրով քանի մը անգամ , ու փոէ հովոտ տեղ մը չքոյ մէջ՝ որ չորնայ : Իսկ թէ որ գետնախինձորով ուզես մաքրել , եփէ գետնախինձորը ու կեղուելէն և ճղմելէն ետև՝ խառնէ թեթև օճառի ջրոյ մէջ , ու շաղուելով խիւս մը շինէ . ու ֆլանելը տաք ջրոյ մէջ խոթելէն ետև , սոյն խիւսով շփէ . այսպէս ըրէ քանի մը անգամ՝ ինչուան որ երևնայ թէ մաքրուեր է . ետքը ցօղուէ խիստ տաք ջրոյ մէջ , ու վերջապէս պաղ ջրէ անցու ու չորցու վերը ըսածնուս պէս :



Անբարտ մը սխալմամբ առնի սուս սուսկը ետ կը դարձնէ .

Մոլիէն երևելի կատակերգակ բանաստեղծը ու Շարափանթիէ երաժիշտը կառքով փարիզ երթալու ատեննին , գիմնացնին մէկ աղքատ մը ելաւ , բանաստեղծը ողորմութիւն տուաւ , և կառքը նորէն ճամբայ ելաւ : Քիչ մը ատեն անցաւ , մէյմն ալ ձայն մը լսեցին որ մուրդը սաստիկ վազելով կը պուռար « կեցէք կեցէք » : կառավարը մէկէն կառքը կեցուց . աղքատը մօտեցաւ իր բարերարին և ըսաւ . « Տէր , սխալեցար , ոչ չգնելով ինձի լուխի մը տրւիր . ահաւասիկ նորէն հրամանքիդ կը դարձնես : կը տեսնես առաքինութիւնը որին քով փախեր է , հառաչելով մը ըսաւ Մոլիէն քովինին . Ա՛ն քեզի ուրիշ մըն ալ առաքինի մարդ :